# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 2-րդ փ., 10 շ., Հեռ. 093-38-84-14 , alagyaz.aragatsotn@mta.gov.am

N 151
*25 հունիս 2020թ.*

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան,

Կից ներկայացնում ենք Ալագյազ համայնքի ավագանու 2020թ. հունիսի 25-ի թիվ 7 արտահերթ նիստի N 31, N32, N33, N34 և N35 որոշումները:

Առդիր 6 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՋԱՄԱԼ ՄԱԽՄՈՒԴՈՎ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Ավդալյան*
*+37493360219*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyaz.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 31

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի N 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 25-ի N 7 արտահերթ նիստի օրակարգը.

1.Ալագյազ համայնքի սուբվենցիոն հայտերի նախագծանախահաշվային փաստաթղթերը հաստատելու մասին,
2.Ալագյազ համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 20-ի N 26 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
3.ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազի Ջամշլու, Ավշեն, Ճարճակիս և Սադունց վարչական բնակավայրերի տեսանկարահանման սարքերի հիմնանորոգման, ձեռքբերման եվ պահպանման համար գումար հատկացնելու մասին,
4.Ալագյազ համայնքի կողմից ներկայացված սուբվենցիոն ծրագրերի իրականացման նախագծա-նախահաշվային և փորձաքննության աշխատանքների կատարման համար գումար հատկացնելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՋԱՄԱԼ
ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ
ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ
ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ
ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ
ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyaz.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 32

## ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Հաստատել Ալագյազ համայնքի Ճարճակիս, Ռյա Թազա, Կանիաշիր վարչական բնակավայրերի ներհամայնքային փողոցների ասֆալտապատման նախագծանախահաշվային փաստաթղթերը,
2.Հաստատել Ալագյազ համայնքի Ջամշլու, Սիփան, Ավշեն վարչական բնակավայրերի գազաֆիկացման ներքին ցանցի կառուցման նախագծնախահաշվային փաստաթղթերը,
3.Հաստատել Ալագյազ համայնքի Ալագյազ, Ճարճակիս, Միջնատուն, Ռյա-Թազա, Միրաք, Շենկանի, Ջամշլու, Սիփան, Ավշեն, Կանիաշիր և Սադունց վարչական բնակավայրերի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնման և հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը,
4.Հաստատել Ալագյազ համայնքի 11 բնակավայրերի համար հանդիսությունների սրահի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՋԱՄԱԼ
ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ
ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ
ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ
ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ
ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyaz.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 33

## ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի «ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 26 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ալագյազ համայնքում Ալագյազի համայնքապետարանի կողմից կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և չեզոքացման միջոցառումների իրականացման համար նախատեսված 250000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարը բավարար չէ այդպիսի միջոցառումների շարունակական իրականացման համար՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Ալագյազ համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 20-ի «Կորոնավիրուսային հիվանդության չեզոքացման միջոցառումների իրականացման համար գումար հատկացնելու մասին» N 26 որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1.«250000 (երկու հարյուր հիսուն հազար)» թվերը և բառերը փոխարինել «450000 (չորս հարյուր հիսուն հազար)» թվերով և բառերով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՋԱՄԱԼ

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԱՄԱԼ ՄԱԽՄՈՒԴՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyaz.aragatsotn@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 34

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶԻ ՋԱՄՇԼՈՒ, ԱՎՇԵՆ, ԾԱՐԾԱԿԻՍ ԵՎ ՍԱԴՈՒՆՑ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ, ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հաշվի առնելով ՀՀ Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Արագածի բաժնի պետի 28.02.2020թվականի N37/4-373 գրությունը ուղղված համայնքի ղեկավարին, Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Թույլատրել Ալագյազ համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի 2020թ. բյուջեի «Կառավարչական ապարատ» ծրագրի 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածից մինչև 350000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ հատկացնել Ալագյազ համայնքի Ջամշլու, Ավշեն, Ծարճակիս և Սադունց վարչական բնակավայրերի տեսանկարահանման սարքերի հիմնանորոգման, ձեռքբերման և պահպանման համար:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՋԱՄԱԼ

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱԲՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyaz.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 35

## ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 89-րդ հոդվածի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Ալագյազ համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 20-ի N 25 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ալագյազ համայնքի սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար թվով 4 նախագծա-նախահաշվային և փորձաքննության աշխատանքները կատարվել են պատշաճ կարգով, Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Թույլ տալ համայնքի ղեկավարին տրամադրել՝

1.Ալագյազ համայնքի 2020 թվականի բյուջեի 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 1950000 (մեկ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ Ասֆալտապատման ծրագրերի իրականացման նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարման համար,

2.Ալագյազ համայնքի 2020 թվականի բյուջեի 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 475000 (չորս հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ գազաֆիկացման ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարման համար,

3.Ալագյազ համայնքի 2020 թվականի բյուջեի 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 395000 (երեք հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ լուսավորության ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարման համար,

4.Ալագյազ համայնքի 2020 թվականի բյուջեի 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 1345000 (մեկ միլիոն երեք հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ հանդիսությունների սրահի ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարման համար,

5.Ալագյազ համայնքի 2020 թվականի բյուջեի 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածից 416000 (չորս հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ ասֆալտապատման, գազաֆիկացման, լուսավորության և հանդիսությունների ծրագրերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության աշխատանքների կատարման համար:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՋԱՄԱԼ

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՐՈՅԱՆ ԱՆԶՈՐ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ